# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*«Քրիստոնապարգև խաղաղությունը աշխարհի համար է»:*
*Գարեգին Բ*

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնեց Ս. Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնը: Նախորդ օրը, հունվարի 5-ին, Ս. Էջմիածնում բազմաթիվ հավատացյալներ ճրագալույցի Ս. Պատարագին հաղորդակից դարձան Ս. Ծննդյան ավետիսին:

Հունվարի 6-ին Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Ծննդյան «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ավետիսով հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին:

Հավարտ Ս. Պատարագի Հայոց Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողություն, որ խորհրդանշում է Քրիստոսի Մկրտությունը Հորդանանում:

Ս. Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, պետական պաշտոնատար այլ անձինք, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***



ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆՈՎ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽԱՉՈՎ ՕՐՀՆՈՒՄ Է ՋՈՒՐԸ. ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՉԻ ԿՆՔԱՀԱՅՐ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ ՊԱՀԵԼ Է ԽԱՉԻ ՇՈՒՇՊԱՆ՝ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՋՐՕՐՀՆՅԱՑ ԽԱՉԸ